11501

…ՋԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Մ. ՄԻՍՆՍԱՐԵԱՆՑ։

№ 3907

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԵԽԱՅՈՑ

ՄԱՐՄՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

ԿՈՄԲ՛Ի

Անգլիացոց թագուհու բժշկի եւ Էդինբուրգի արքունի Բժշկական Համալսարանի անդամի։

ՅԱՒԵԼՈՒԱԾՔ ՏՊԱԳՐՈՂԻ

Ա. Ցուցակ յատուկ անուանց Հայոց։
Բ. Տիւրի՛ի տեսութիւնը բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական և իգական սեռեր յառաջանալու մասին։
Գ. Արորոցի (օրօրոցի) երգեր։
Դ. Աղիւսակ պարզ տոկոսի, հարիւրին 4% 5% և 6%, մէկ րուբլի դրամագլխից սկսուած մինչև մէկ միլիոն և նոցա շահը մէկ օրից մինչև մէկ տարի։

Հայ անունը ոչ թէ դրամօք, այլ խնամօք կու ճարվի։

Սէյեադ։

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.
…ОГРАФІИ О. И. БАКСТА, НЕВСКІЙ, 71.
1868.

Գրաշար Մկրտիչ Էֆենդեանց

11501

Մանկտիք, զիս Հայոց հողն ու ջուրն սնուցել,
Ես այն հողն ու ջուր սրտով եմ սիրել.
Հայրենեաց հարուստ է հողն, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ, քաղցր հայրենեացն փուշ։

Զեզ կ'ասեմ մանկտիք սիրուն, նազելիք,
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ,
Մի ուրանայք զերկիրդ և զազգդ սիրուն.
Նառն արմատով ծառ, տուն հիմամբ է տուն։

Հ. Ղեւոնդ Ալիշանեան,
Վենետկու Մխիթարեան վարդապետ

77
6

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂ։

«Երբ որ իմաստութեան սերն
Մէկ ազգի մէջին տարածուեց,
Իմացիր, երկնային Տէրն
Գթած, նորա բաղդը բացուեց։

Ուէյեադ։

Կոմբի այս շարադրութեան բովանդակութիւնը և յառաջաբանութիւնը կարդալով, իրաքանչիւր մտածող մարդ կհասկանայ, թէ ինչ նպատակով առաջարկեցինք մերայնոց այս գրքի հայերէն թարգմանութիւնը։ Մենք կամենումէինք մեր կարողութեան չափով նպաստամատոյց լինել հայ ժողովուրդի մէջ տարածելու ուսումնական առողջ գաղափարներ, վերաբերութեամբ երեխաների ֆիզիկական և բարոյական դաստիարակութեան, դեռահաս մեռնողների թիւը պակասացնելու, և առ հասարակ աղատ պահելու այն, մեծ մասամբ անուղղելի, սխալներից, որ սակաւակիրթ ազգերի մէջ կապակից են ծննդեան և գալոց սերունդի դաստիարակութեան հետ։

Ընձամբ կրելով այդպիսի դժուարութիւնք, մենք յանձնառու եղանք իրագործել մեր այս դիտաւորութիւնը։

1865 թ. Ստուած պարգևեց մեզ գաւակ. չունենալով սկզբնական տեղեկութիւնք անգամ նորածնի խնամարկութեան մասին, մենք ստիպուած էինք գրեթէ ամեն ժամ դիմել բժշկի և մանկաբարձի խորհուրդներին։ Ահա գտանվելով այսպիսի աննախանձելի դրութեան մէջ, մեզ հասկանալի եղաւ, եթէ մենք,—վայելելով փոքր ի շատէ յարմարութիւնք—բնակվելով Պետերբուրգի պէս քաղաքում, ուր ամենայն հնար կարող ենք ունենալ ձեռքի տակ,—հանդիպումենք այսպիսի դժուարութեան, այն ժամանակ երևակայեցինք յայտնապէս, թէ ինչ դրութեան մէջ պէտք է լինին մեր համազգայիններից շատերը,—որոնք, երկրիս զանազան տեղերում ցրուած

գոլով, ապրումեն կարօտութեան մէջ, զուրկ գիտութեան օգնութիւնից և գրեթէ իւրեանց փորձով միայն գոհ լինելու ստիպուած։ Այս իրողութիւնքը աչքի առաջ ունենալով, ուխտ արինք, ըստ չափու կարողութեան, օգուտ տալու մերայնոց, հրատարակելով մի այնպիսի գիրք, որ դիւրացուցանէր երեխայի հոգևոր և մարմնաւոր դաստիարակութիւնը։ 1866 թ., յունվարի սկզբում, մենք առաջարկեցինք Միքայէլ Տէր Գրիգորեանցին (Ղախիչևանցի, նախկին աշակերտ Լ. Ուսում.), թարգմանել Վեստի շարադրութիւնը. «Объ уходѣ за больными дѣтьми».

Հանգամանքները արգելք եղան մեր առաջարկութիւնը շուտով իրագործելու, մանաւանդ այն պատճառով, որ պ. Տէր Գրիգորեանցը, առ ժամանակ, ստիպուած էր իւր հայենիքը գնալ։ 1866 թ. յուլիսի մէջ, նա նամակ գրեց մեզ, այն մեր Նորան առաջարկած գրքի թարգմանութեան մասին, բայց որովհետև այդ ժամանակամիջոցին դուրս եկաւ ռուսերէն լեզուով Կոմբի երևելի շարադրութիւնը, մենք այնուհետև առաջարկեցինք պ. Տէր-Գրիգորեանցին սկսել այդ շարադրութեան թարգմանութիւնը։ 1867 թ., մայիսի մէջ, առաջի չորս թերթը տպուեցաւ Տրանշէլի տպարանում; յետոյ, Դեկտեմբերի վերջերում, սկսեցինք շարունակել տպագրութիւնը Ռակստի տպարանում; ահա այժմ, 1868 թ. այս մարտ ամսում, ամբողջ գրքի տպագրութիւնը վերջապէս աւարտուեցաւ։ Ընդ ամենը տպուած է 1,210 օրինակ։ Կոմբի տպագրութեան, նոյնպէս Լաբուլէի «Ազգային կրթութեան» վերնագրով տետրակի տպագրութեան համար, մենք, մեր հաշուով, գնեցինք Լեմանի ձուլարանից եօթն պուդի մօտ հայոց տառեր, իսկ մի քանի տեսակ բոլոր տառեր—գլխատառեր և ծաղկատառեր, առինք Յովհաննէս Ստեփանոսեան Ընանեանցից, որ սա ձեռք էր ձգած Փարիզում պ. Ռամից։ Տառերը մեզ նստաւ 244 ռուբլի։ Լաբուլէի թարգմանութեան տպագրութիւնը 1,200 օրինակ—նստաւ 195 ր.։ 600 օրինակ տուած է թարգմանչին; 300 օրինակ ուղարկուած է զանազան հայկական դպրոցներ և զանազան անձանց.—Էջմիածին, Տփխիս, Գորի, Ռութայիս, Տրապեզունդ, Կ. Պոլիս, Մոլդո-Վլաքիա, Վենա, Վենետիկ, Փարիզ և այլ քաղաքներ։ Ծախու մնաց 300 օրինակ; գինն է 40 կ. կամ 1 ֆրանկ 50 սանթիմ։

Կոմբը, հանդերձ յաւելուածներով, տպուած է 1210 օրինակ։ Սորա տպագրութիւնը նստաւ, վարձատրութեամբ թարգմանչին,

առանց ճանապարհի ծախսի, 983 ռուբլի. Գինն է մի ռուբլի 20 կոպէկ կամ 4 ֆրանկ 80 սանտիմ, յաւելուածներով հանդերձ։

Գրավաճառներին և 25 օրինակից աւել առնողներին լինում զեղչում 20%։

Այս տեղեկութիւնքը հաղորդեցինք այն նպատակով, որ մեր համազգայինքը ինքեանք տեսնեն, որ այս գրքերը հրատարակելու շարժառիթը չէ եղել մեր անձնական շահը, այլ մեր փափագը, ըստ չափու կարողութեան, ձեռնտու լինել մեր ազգի յառաջադիմութեանը լուսաւորութեան ասպարէզում։ Այս գիրքը մասամբ կարող է օգտակար լինել և նոցա համար, որոնք կամենումեն այս տեսակ բաներ գրել կամ թարգմանել. անտարակոյս, աւելորդ չի լինիլ այսպիսի գրքեր թարգմանելու կամ այսպիսի նիւթերի վերայ մի բան գրելու ժամանակ տեսնել, թէ ինչպէս թարգմանել է թարգմանիչը գիտութեան վերաբերեալ զանազան բառերը և դարձուածները։ Մեծամեծ դժուարութիւնք են պատահել գիտնական բառերը ճիշդ նշանակութեամբ թարգմանելու։ Շատ քիմիական և բժշկական բառերի թարգմանութիւնքը հարցուցել ենք Վեննայի և Փարիզի մէջ կացող Մխիթարեանց վարդապետներից։ Լսօք չկայ, որ Կոմբի շարադրութիւնը գրած է համեմատ այն ազգի կարօտութեանց, որի մէջ հեղինակը ինքը ապրել է. ասել է թէ մեզ առաւել համապատասխան կլինէր . . . . եթէ մի այսպիսի շարադրութիւն դուրս գար հայերի մէջ այնպիսի մարդու ձեռքով գրած, որ, բացի տեղեակ լինելուց բժշկութեան, մանաւանդ ֆիզիօլոգիային, նաև հիմնաւորապէս ծանօթ լինէր մեր հայերի սովորութեանց, կանխակալ կարծիքներին և երեխաների դաստիարակութեան մասին ունեցած գաղափարների հետ; բայց որովհետև մեր այդ յոյսը շուտով իրագործելու հնար չունինք, մանաւանդ միտ դնելով, որ մեր ազգը, զանազան տեղեր ցրուած լինելուն պատճառով, ունի զանազան սովորութիւնք և նախապաշարմունք, որ գրեթէ անկարելի է և անհնարին մի մարդու գիտենալ, այդ բոլորը, մանաւանդ այժմս, մնաց որ ներկայումս շատ և շատ դժուար է հայերի հաղորդակցութիւնը միմեանց հետ, այս պատճառով կարծումենք, որ Կոմբի այս գիրքը անկասկածելի օգուտ կտայ նոցա, որոնք կաշխատեն իմաստասիրել և իրացուցանել սորա բովանդակութիւնը, մանաւանդ որ ընդհանուր ֆիզիօլոգիկական օրէնքները, որոնցից կախ է մեր կազմուածքի աճեցողութիւնը, միօրինակ են բոլոր կլիմաների (օդաբաժին) մէջ։

Ունենալով այս բոլորը մեր աչքի առաջ, նմանապէս և անուանի փիլիսոփայ Ռէկօնի խօսքերը.— «Ամեն բանից աւելի մեր վերայ ազդեցութիւն անողը սովորութիւնն է. ուրեմն պէտք է աշխատենք գոնէ մեզ լաւ բաներու վարժեցնենք, եթէ որ չենք ուզում ախտաւոր լինել և դորա բռնութեան տակ նուաճիլ, որ, քան ամեն բռնաւոր, աւելի անողոք է»:

«Ունայնամիտ մարդը, գիտութիւնը արհամարհումէ; պարզասիրտը յարգում և զարմացմամբ գովումէ, իսկ իմաստունը ընդունումէ և գործ է դնում, միշտ աշխատելով պատուել»:

«Կարդալը, իմաստուն և խելօք մարդերի հետ զրուցել է, որոնցից միշտ մարդս բան կարող է սովորել; իսկ աշխարհի հետ կենցաղավարիլը, գրեթէ խենթերի հետ խօսակցիլ ասել է, որոնց հետ որչափ աւելի խօսիս, այնչափ խելքդ աւելի կցնդեցնես»: (Այսրէն Թարգ. «Ռազմավէպի» 1860 Թուականի, եր. 357)—մենք կըցանկայինք, որ բոլոր ուսումնասէրք և ազգասէրք աշխատէին այս գրքի մէջ պարունակուած տեղեկութիւնքը տարածել մեր ժողովուրդի մէջ, թէ մասնաւոր ընթերցանութեամբ, թէ հրապարակական: Օրինակի համար. դպրոցների վերին դասատան աշակերտների համար կարելի էր նշանակել հրապարակական դասախօսութիւնք այս գրքի բովանդակութիւնը բերանացի պատմելու: Մեր սրբակրօն քահանայքը ևս մեծապէս կարող էին նպաստամատոյց լինել այս գործին, եթէ քաջալերութիւն ստանային վիճակաւոր առաջնորդներից, ծուխի նշանաւոր անդամներից և այլն: Այսպէս, մի գիրքը կարող էր ոչ սակաւ օգուտ բերել բազմաթիւ չքաւոր և անգրագէտ հայերին: Ա. հասարակ, տարածել մեր ազգի մէջ ճիշդ տեղեկութիւնք ընդհանուր և մասնաւոր առողջաբանութիւնից (гигіена), համարումենք անհրաժեշտ և ամենակարևոր բաներից մինը, նորա մարմնական և բարոյական բարեկեցութեան համար, մանաւանդ քաղաքաբնակների համար, որովհետև առողջաբանական պայմանները քաղաքների մէջ ամենաթշուառ և ամենաամօթալի դրութեան մէջ են գտանվում, բնակիչների տգիտութեան և անտարբերութեան պատճառով. . . . . .:

Այս մեր ասածը կատարելու, բնաւ դժուարութիւն չկայ քաղաքներում: Դորա համար բաւական է նշանակել տօն օրերը, հրապարակախօսութիւնք, տեղական ծխական և քաղաքական դպրոցների շինուածքի մէջ; լաւ եղանակին, երեկոյեան ժամից յետոյ, եկե-

, կարելի է կատարել այդ բանը մի և նոյն ժամաշարականներին տեղերում ևս: Որպէս զի ամենքը, և հոգևորականք Ա. Հնարք ունենային լսել այդ դասախօսութիւնքը, վիճակաւոր առաջնորդները կարող են նշանակել առանձին ժամեր: Այդ դասախօսութեանց կարող էին պարապել գլխաւորապէս բժշկական կըրթութիւն ստացողները, յետոյ համալսարանում, գիմնազիայում և սեմինարիայում կրթուածները, կարճ ասեմ—բոլոր կրթուած մարդիկ: Ռուսիաբնակ հայերից այդ սրբազան գործը լցուցանել կամեցողները կարող են, բացի յատկապէս բժշկական գրքերից, իբրև նիւթ, ձեռքի տակ ունենալ այս Կոմբի մեր առաջարկած շարադրութիւնը, Լաստէրլենը (Человѣкъ и сохраненіе его здоровья. Общепонятныя гигіеническія письма. Перев. съ нѣмецкаго. Спб. 1866 и 1867. Ц. 2 руб.), նմանապէս և հանգուցեալ բժշկապետ Թանէվսկիու ժողովրդական շարադրութիւնը, որ տպուած է Տփխիսում: Մեր հայերից հազարաւոր երիտասարդներ աւարտած են իրանց կրթութիւնը վերին և միջին ուսումնարաններում Ռուսաստանի և Եւրոպայի մէջ. մի՞թէ դրա չեն կամենալ լցուցանել ազգի այս անհրաժեշտ և ամենազգալի կարօտութիւնը. յանուն լուսաւորութեան, մարդասիրութեան և ազգասիրութեան . . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Յանկալի է նաև, որ մերայինք հասկանային վերջապէս դըպրոցների մէջ կանոնաւոր գրատուններ հիմնելու անհրաժեշտ կարեւորութիւնը: Այդ նպատակով մենք տպեցինք Լաբուլէյի, Ֆրանսիացոց երևելի գիտնականի, շարադրութեան թարգմանութիւնը. ա) Ազգային կրթութիւն. բ) Ինքնակրթութիւն և գ) Ազգային կամ ժողովրդական գրատուններ: Դորան կպուցինք, իբրև յաւելուած, ցուցակ ռուսերէն լեզուով տպած լաւագոյն գրեանց, որպէս զի կամեցողները դժուարութիւն չկրեն ընտրողութիւն անելու ժամանակ; նաև դոցա գինէրը և երևելի գրավաճառների հասցէները ևս նշանակեցինք:
. . . . . .
. . . . . .
. . . . . .

Այս գրքի մէջ, բացի հեղինակի յաւելուածից [illegible]էս և անուա- յետագայ յօդուածները, իբրև առանձին յաւելուածք. [illegible]րայ

Ա. Հայ յատուկ արական և իգական անունների ցանկը, — [illegible]յոց պատմութիւնից առած:

Բ. Թէ ինչպէս յառաջանումեն բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական կամ իգական սեռեր:

Գ. Աղիւսակ պարզ տոկոսի, հարիւրին 4°/o, 5°/o և 6°/o, մէկ մանէթ դրամագլխից սկսուած մինչև մէկ միլիօն և նոցա շահը մէկ օրից մինչև մէկ տարի: Աղիւսակին յաւելցրած է համառօտ մեկնութիւն տոկոսի աղիւսակը գործածելու մասին և աղիւսակ գլխաւոր ազգաց դրամների Գաղղիոյ և Կ. Պօլսոյ դրամներուն հետ բաղդատուած (վերջինը առած է Պ. Միքայէլեանցի շարադրած և պ. Արամի տպած Թուաբանութիւնից):

Գ. Օրօրոցի (օրօրօցի) երգեր:

Զուրկ լինելով մի այնպիսի տոկոսի աղիւսակից, որով դիւրութեամբ կարելի լինի գտնել որ և է դրամագլխի շահը, որ և է ժամանակի համար, գործածելով միմիայն հասարակ թուաբանական յաւելումն (որով կարելի է շատ ժամանակ վաստակել), կարծումենք, որ մեր առաջարկած շահու աղիւսակը անօգուտ չի լինիլ մերայնոց: Ունենալով աչքի առաջ, թէ որ և է դրամագլուխ ունեցողները, մեծ մասամբ, ընտանիքի տէր են; միւս կողմանէ, որպէս զի Կոմբի շարադրութիւնը տեղի ունենայ վաճառականների խանութների մէջ ևս, որ այդ վաճառականները, ազատ ժամերում, ծանօթանային գրքի բովանդակութեան, տոկոսների աղիւսակը, իբրև յաւելուած, տպեցինք Կոմբի թարգմանութեան հետ միասին, նախատեսնելով մի և նոյն ժամանակ այն բոլոր հերքողութիւնքը, որ մեզ անելու են. թէ ինչու համար աղիւսակը առանձին տետրակով չտպեցինք:

Սորանից յետոյ մենք տպելու ենք, Աստուծոյ օգնականութեամբ, լիակատար ժողովածու հայկական երգերի, որոնց մէջ կպարունակուին յետագայ հատուածները. 1) «Մանկական կամ օրօրոցի երգեր», 2) «Ռամկական կամ ժողովրդական երգեր», 3) «Ազգասիրական երգեր», 4) «Խնճոյքի և սիրոյ երգեր», 5) «Տխուր երգեր», 6) «Խառն երգեր», 7) «Հոգևոր երգեր», 8) «Հայախօս առածներ և ասացուածներ»: Այս երգարանի նիւթերը քաղեցինք բոլոր եղած երգարաններից, ոտանաւորների ժողովածուներից և

շարականներից, Պետերբուրգ, Մոսկվա, Տփխիս, Պօլիս, Վիեննա, Վենետիկ և այլ քաղաքներում, թէ առանձին և թէ օրագիրների մէջ տպածներից: Բոլոր աղբիւրները և հեղինակները ամբողջապէս կնշանակուեն: Տիպը և թուղթը այս գրքի նման կլինին, գիրքը սակաւ ինչ փոքր, 25 թերթից առաւել, գինն մօտաւորապէս 1 ման. կնշանակուի; 25 օրինակից պակաս չառնողներին և գրավաճառներին 20 կոպ. զիջումն: Երգերի սկզբում երկու յօդուած կըտպուին. 1) երգերի նշանակութիւնը և այլն և 2) Հին հայկական ժողովրդական երգերի վրայ . . . .

. . . .

. . . .

Վաղուց արդէն մենք դիտաւորութիւն ունէինք տպել մի հայերէն այբենարան, որ մանկավարժութեան (պեդագօժի, педагогія) գիտութեան արդի պահանջողութեանց համապատասխան լինէր, երկու մասն բաժանակ. 1 մասը վարժապետների համար, ցոյց տալով կարդալ գրել սովորցնելու բոլոր եղանակները, կրիտիկական քննութեամբ և 2-դ մասը աշակերտների համար: Այդ խնդիրը լցուցանելու համար ռուսաց գրականութեան մէջ, հանդերձ այլովք, ձեռնտու կարող են լինել «Ուչիտել» լրագիրը 1861—1867 թ. Պաուլսօնի, Զօլոտովի, Ուշինսկիու, Շարլօվսկիու և Կատրեա Մայկօյի այբենարանները: Ներկայումս այս տեղ, Պետերբուրգում, այդ գործի վրայ աշխատումէ մեր քանքարաւոր երիտասարդներից մինը: Ցանկայինք նորան կատարեալ յաջողութեամբ վերջացնել այս գործը:

Նոյնը մտածել էինք կանոնաւոր և վայելուչ գրութեան դասագիրք հրատարակելու մասին մի և նոյն գաղափարով: Սորա նիւթերը գրեթէ պատրաստ ունինք մեր ձեռքի տակ: Եթէ ժամանակը, հանգամանքները և միջոցները կը ներէն, կ'աշխատենք մեր կարողութեան չափով կատարել այս գործը: Կներէնք մեզ այս տեղ ասելու, որ այս հարցը մենք բաւական երկար ժամանակ իմաստասիրել ենք, խորհրդակցելով այս գործին հիմնաւորապէս տեղեակ մարդոց հետ Պետերբուրգում և Եւրոպայում:

. . . .

. . . .

. . . .

Բայց երբ վերջապէս մեր հայերը ձեռնամուխ կ'լինեն մի կա-

նոնաւոր վարժապետական ուսումնարան հիմնելու։ Գիտցած լինինք, որ առանց դորա, ազգային լուսաւորութեան գործերի վերաբերութեամբ, միշտ պէտք է խարխաբենք խաւարի մէջ։ Ինչ դպրոցներ պէտք է լինին այն դպրոցները, որոնք չունին պատշաճաւոր կերպով պատրաստած վարժապետներ։ Ա՛ղուց և շատ վաղուց արդէն հարկաւոր էր ձեռք դնել այդ գործին։ Դա գլխաւոր և միակ միջոցն է ազգային դպրոցների յաջողութեան, ասել է և ազգային լուսաւորութեան։ Ռուսիաբնակ հայերի համար այդ հիմնարկութիւնը (վարժապետական դպրոցը) յարմարագոյն է Ղերսիսեան դպրոցի մէջ հաստատել։ Այդ դպրոցի մէջ ուսման ընթացքը աւարտող աշակերտներից լաւագոյները ընտրել և կազմել դոցանից առանձին դասեր; պարապեցնել նոցա ընթերցանութեան հայ մատենագիրների; տալ կարդալ դոցա ռուսերէն և ֆրանսիարէն (եթէ աշակերտք իմանումեն գաղղիարէնը) թարմանութիւնքը հայ մատենագրութեանց; ուսուցանել, մեկնութեամբ, Աստուածաբանութիւն, եկեղեցական պատմութիւն և բոլոր Աստուածաշունչը; պարապեցնել գերմանական լեզուի։ Երբ որ գերմանական լեզուն կիմանան այնքան, որ կարող կլինին ազատ կարդալ և հասկանալ, այն ժամանակ ուղարկել Գերմանիայի վարժապետական ուսումնարանները, յանձնելով նոցա Բերլինեան համալսարանի հոգաբարձութեան։ Այդ մասին կաթուղիկոսը, յանուն ազգի, քրիստոնէութեան և լուսաւորութեան, դիմումէ այն համալսարանին խնդիրքով և այլն, և այլն. . . :
Եթէ ժամանակը ներէ, մենք մասնաբար կմշակենք մեր ենթադրութիւնքը այս խնդիրի մասին։

«Լաբուլէի» և «Կոմբի» հայերէն տպագրութիւնքը կարելի է ստանալ.

Տփխիս. պ. պ. Ս. Ալադաթեանցի և Ա. Լենֆիաճեանցի գրավաճառանոցներումը. Въ Тифлисѣ, въ книжныхъ магазинахъ С. Аладатова и Амбарцума Энфіаджьянца, на Эриванской площади.

Ս. Պետերբուրգում Ռուսաց գրավաճառանոցումը (առաջ Տիբլենին), Նեվսկի Պրոսպեկտ, Հայոց եկեղեցւոյ տանը; Բաղունովի գրավաճառանոցումը, Նեվսկի Պրոսպեկտ, Կազանու կամուրջի մօտ, Օլխինի տանը; Իսակովի գրավաճառանոցումը, Նեվսկի Պրոսպեկտ, Գոստիննոյի Դվոր, № 24։ Իսակովի միջնորդութեամբ

կարելի է ստանալ Վենետկու և Վեննայի Հ. Հ. Մխիթարեանց տպագրութիւնքը ևս, հաշուելով ամեն մի ֆրանկը 40 կոպէկ, գրեանց ճանապարհի ծախսով միասին։ Въ С.-Петербургѣ: въ Русской Книжной торговлѣ (бывшей Тиблена), на Невскомъ проспектѣ, въ домѣ Армянской церкви; въ книжномъ магазинѣ Базунова, на Невскомъ проспектѣ, у Казанскаго моста, домъ Ольхиной; въ книжномъ магазинѣ Якова Алексѣевича Исакова, въ Гостинномъ дворѣ, № 24. Чрезъ посредство Исакова также можно получать армянскія изданія венеціанскихъ и вѣнскихъ Мехитаристовъ, считая каждый франкъ, вмѣстѣ съ пересылкой книгъ, по 40 копѣекъ.

Կոստանդնուպոլիս. պ. Յարութիւն Մարգարեանի գրասենեակը, Մերճան-չարշի, Գոլու չըքմազ-խան, № 11.

Օ՛միւռնիա (Իզմիր) կը խնդրէինք Տէտէան գրատունէն միջնորդել մեր տպագրութիւնքը վաճառելու.

Մենք յանձնառու ենք ինքներս ուղարկել ցանկացողներին մեր տպագրութիւնքը այն ժամանակ միայն, երբ 25 օրինակից պակաս չեն խնդրիլ զնչելով հարիւրին 20 կոպ։

Մեր հասցէն.

Միքայէլ Մեսրոպեան Միանսարեանցին, Ս. Պետերբուրգ.

Ротмистру Михаилу Месроповичу Міансарову, въ С. Петербургѣ, на Михайловской площади, домъ № 2/3 Жербина, кв. № 5. Michel Miansaroff, S.-Pétérsbourg, place Michel, maison № 2/3 de Gerbinne, log. № 5.

Ծանօթ. 1. Երեք գլխաւոր ջերմաչափներ կան, որոնց բաժանումն, այսինքն աստիճանները, զանազան են. Ֆարէնհէյտի, Ռէօմիւրի և Ցելսի՛ի ջերմաչափները առաւել գործածական են Եւրոպացւոց մէջ։ Ո՛իշդ և մանրամասն տեղեկութիւնք դոցա մասին կարելի է գտանել Ֆիզիկայի մէջ։ Այս տեղ, զգուշացուցանելու համար միայն, որ երեք այլ և այլ ջերմաչափների զանազան բաժանումնքը չգիտողներուն վտանգաւոր սխալմունքներից ապահովացնել, նշանակումնք առաւել գործածական Ռուսիայի մէջ Ռէօմիւրի և Ֆարէնհէյտի ջերմաչափների քանի մի աստիճանաց համեմատութիւնքը, կամ զանազանութիւնքը ջերմութեան վերաբերութեամբ։

ՐԵՕՄԻՒՐ։	ՖԱՐԵՆՀԷՅՏ։
28	95
23	83³/₄
18	72¹/₂
13	61¼
8	50
4	41
0	32

Ը. հասարակ Ֆարենհէյտեան (այս շարադրութեան մէջ գործածական) ջերմաչափի վերայ ցոյց տուած աստիճանը Ռեօմիւրի վերայ փոխելու, հարկաւոր է նկատել, որ Ֆարենհէյտեան ջերմաչափի 32° (աստիճանը) մի և նոյն է թէ 0° (սառուցման կէտ) Ռեօմիւրի ջերմաչափի վերայ։ Ուստի Ֆարենհէյտեան ջերմաչափի վերայ նշանակուած բարեխառնութիւնը Ռեօմիւրի վերայ փոխելու, հարկաւոր է Ֆարենհէյտեան աստիճանի թուահամարից հանել 32; մնացորդը ⁴/₉ բազմապատկել, այսինքն բազմապատկեկել 4-ով և ստացուած գումարը բաժանել 9, կամ բազմապատկել 9 և բաժանել 4։

Ծանօթ. 2։ Ը. առաջին անգամ Կոմբի շարադրութիւնը ձեռք առնողներին, խորհուրդ ենք տալիս նախ և առաջ ուշադրութեամբ կարդալ հեղինակի յառաջաբանութիւնը, գրքի I և XV գլուխները և ապա մնացածները, ըստ կարգին։

Ծանօթ. 3։ Ը. այս 1868 թուականի յունիս ամսին, պատրաստ կը լինի նաև (եթէ որ և իցէ արգելքի չենք հանդիպիլ), Երգարանի հետ, առանձին տպագրութիւն կանոնաւոր «Յուցակի», թէ առանձին շարադրութեանց և թէ օրագիրների և լրագիրների հատուածների. Ռուսաց, Լատինացւոց, Իտալացւոց, Գաղղիացւոց, Գերմանացւոց, Անգղիացւոց և Լեհաց (պոլեակի) լեզուաւ գրած, ——հին ժամանակներից մինչև այս 1868 թ. ապրիլ ամիսը,—— Հայաստանի և Հայաստան կեցած հայոց մասին և այն հայերի և օտար երկիրների, ուր հայերը բնակվումեն այժմ և կազմումեն փոքր 'ի շատէ ականաւոր թիւ։

Մ. Մ. Մխիթարեանց։

26 մարտի / 7 ապրիլի 1868 թուականի։
Ս.-Պետերբուրգ։

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Կան շատ պատուական շարադրութիւնք երեխաների խնամատարութեան համար գրուած, բայց ծնողների համար, յատկապէս սոցա հարկաւոր տեղեկութիւնք հաղորդող գրուածներ, շատ սակաւ են։ Այդ տեսակ գրքերի մեծ մասի մէջ երեխաների ընդհանուր խնամատարութեան վերայ շատ համառօտաբար է խօսվում, և այն իբրև ներածութիւն երեխայական հիւանդութեանց նկարագրութեան, և ընթերցողը, մասնաւորապէս անծանօթ լինելով առարկային, և հիմնուելով այդ գրքերի վերայ, այնպիսի գործողութեանց է դիմում, որոնց հետևանքը շատ վտանգաւոր է լինում երեխայի կեանքի համար։ Ուստի այդ գրեանքը կարող են ուղղեցոյց լինել միայն բազմակողմանի տեղեկութիւնք ունեցողներին։ Իսկ մի քանիսը գոցանից, որ գրուած են յատկապէս մայրերուն առաջնորդելու համար, թէև այդ պակասութիւնքը չունին, և շատ հարուստ են գեղեցիկ գործնական խրատներով, այսու ամենայնիւ չեն հասանում իրանց նպատակին, ըստ որում նոցա մէջ գործնական կանոնները և ցոյցերը առաջարկվումեն իբրև վերացական, անձնական կարծիքներ, մնաց որ ցոյց չէ տուած նոցա կապակցութիւնը ֆիզիօլոգիայի այն օրէնքների կամ սկզբունքների հետ, որոնց վերայ հիմնուած են նոքա և որոնց զօրութեամբ յառաջանում այս կամ այն հետևանքը։

Երեխաների խնամատարութեան վերաբերեալ ամենալաւ շարադրութիւնքը անգամ, թէև շատ արժանաւորութիւնք ունին ուրիշ կողմից, այդ անկատարելութեանց պատճառով, կարող չեն լինել պիտանի մասնաւոր տեղեկութիւնք չունեցող ընթերցողներիս առաջնոր-

դութեան։ Խոստովանելով այդ բանը, ահա յղացաւ իմ մէջ միտք գրելու մի այնպիսի դասագիրք, որի մէջ բոլոր գործնական կանոնները, որքան որ կարելի է, հիմնուած լինէին ֆիզիօլօգիական ոկզբունքների վերայ։ Շատ տարիներ ես հաւաքումէի նիւթեր, բայց յանձնառու չէի լինում դիտաւորութիւնս իրագործելու, երկիւղ կրելով, որ մի գուցէ չկարողանամ առարկան մինչև այն աստիճան ժողովրդականացնել, որ դա միանգամայն հասկանալի լինի ամենահասարակ ընթերցողիս համար անգամ։ Իմ միս շարադրութեանցս ունեցած յաջողութիւնքը և բազմաթիւ վկայութիւնքը նոցա բերած օգտի մասին քաջալերեցին ինձ ձեռք զարկելու այս գործին, և ահա վերջապէս յանձնառու եղայ հրատարակելու այս գիրքը։ Այն ընդունելութիւնը, որ այս գիրքը գտաւ Անգլիայումը, որպէս և արտասահմանում, վկայումէ, որ սա, որքան և իցէ, լցուցանումէ ընդհանուր կարօտը,—և այդ կարծիքի մէջ ես առաւելապէս հաստատվումեմ ժողովուրդի ամեն դասակարգի ծնողների խոստովանութեամբ, թէ այս գրքի ընթերցանութիւնը հարկադրել է նոցա աւելի խորին ուշադրութեամբ նայելու իրանց դէպի զաւակները ունեցած պարտականութեանց վերայ և լաւապէս սպասաւորել է նոցա այդ դժուար խնդիրը կատարելու։

Ռէկոնը նկատել էր, որ «մարդս, բնութեան տէրը և թարգմանը, կարող է իշխել բնութեան վերայ և հասկանալ նորան այնքան, որքան իրականապէս կամ մտաւորականապէս կարողացել է դիտել նորա կարգը, դորանից աւելի նա կարող չէ, ոչ իմանալ և ոչ անել»։ Այս ասացուածի համեմատ, ես իմ բոլոր շարադրութեանցս մէջ, չեմ բաւականացած անձնական դատողութիւններով, այլ հետևել եմ այն կանոնին, թէ բոլոր գործնական ցոյցերը և խրատները պիտոյ է հիմնել մարդկային գործարանի օրէնքների, այսինքն Արարիչի կամքի վերայ։ Սորա ակներև օգուտը այն է, որ այսպիսի դիպուածում, մեր իմաստասիրած իւրաքանչիւր ճշմարտութիւնը երևան է գալիս մեր առաջ, իբրև յայտնութիւն աստուածային հանճարի, և հետևաբար նորանից յառաջացած բոլոր գործ-

նական կանոնները լինումեն մեզ համար պարտականութիւն, իբրև յայտնութիւն Աստուածային կամքի։ Իսկ եթէ անցանենք մի առարկայից դէպի միս առարկան, մի կանոնից դէպի միս կանոնը, առանց մտադիր լինելու նոցա կապակցութեան մին մինի և մարդկային կազմուածքի օրէնքներին հետ, այն ժամանակ, թէև կհարստացնենք մեր տեղեկութեանց պաշարը, բայց շատ հեշտութեամբ կարող ենք միանգամայն սխալ դատողութիւնք անել և, նոցանից օգտակար գործադրութիւն անելու ժամանակ, մեծապէս շփոթուիլ, դժուարութեանց հանդիպելով, մինչ դեռ պատշաճաւոր գործադրութեամբ նոքա կարող են շատ արդիւնաւոր լինել։ Մ՚իտքս աւելի լաւ բացատրելու համար ես մի համեմատութիւն կանեմ։ «Մարդս, որ պարապումէ մարդկային կազմուածքի խնամատարութեան, առանց հետևելու որ և իցէ սկզբունքների, նմանումէ մի ճանապարհորդի, որ, առանց աշխարհագրական կարտի և ուղղեցոյցի, ճանապարհ է ընկնում մի տեղ գտնելու դէպի այնպիսի երկիր, որ նորան միանգամայն անծանօթ է։ Կարող է պատահել, որ նա առաջին անգամից ոտքը նոյն իսկ իւր հարցասիրած տեղը դնէ, կամ վերջապէս երկար ու ձիգ պտրելուց յետոյ գտնէ այդ տեղը, բայց աւելի հաւանական է, որ նա իւր նպատակին չհասած և երկատև ու անօգուտ ճանապարհորդութիւնից հոգնած տուն կվերադառնայ։ Ընդ հակառակն, սկզբունքների հետևող մարդուն կարելի է համեմատել մի ուղևորի հետ, որ ճանապարհ է ընկնում կարտը ձեռին, որի վերայ նշանակած են երկրի բոլոր շրջանագրութիւնքը[1]. նա որքան և իցէ հաւաստիութեամբ գիտէ, թէ որ ճանապարհով պիտոյ է գնայ իւր նպատակին հասնելու համար, և եթէ, կարտի անկատարելութեան կամ անճշդութեան պատճառով, մոլորուի ճանապարհից, մի և նոյն կարտան, որ իւր թերութիւններով սորան մոլորութեան մէջ էր ձգել, կըցուցանէ սխալը և հնար կը տայ ուղղելու այն։ Ես ամենևին չեմ կարծում, որ այս գրքի մէջ ես մի նոր բան եմ ասել։ դորա առանձին յատկութիւնն այն է, որ ցոյց է տուած դորա մէջ

[1]) Очертанія страны.

իմ վերոյիշած կանոնների գործադրութիւնը, այսինքն գործնական խրատները հիմնել մարդկային կազմուածքի օրէնքների վերայ։ Եթէ ինձ յաջողի այդ կանոնի օգտակարութիւնը գէթ մասամբ համոզելի կացուցանել, այնուհետև ուրիշների աշխատութիւնքը սոյն ասպարէզում աւելի շահաւէտ ուղղութիւն կըստանան, և մենք աւելի հնար կունենանք նշմարելու և ուղղելու այն սխալները, որ կարող էինք անել—ես կամ ուրիշները։

Իմ աչքի առաջև ես ունէի գլխաւորապէս ծնողները և գեռահաս և անփորձ բժիշկները։ Բայց այս առարկան, որի վերայ խօսումենք, ուրիշների համար ևս արժանի է ուշադրութեան. երեխայական կազմուածքի իմաստասիրութիւնը մի շատ հետաքրքրական բան է, հարուստ վերին գործադրական խորհուրդ ունեցող ճըշմարտութիւններով, ուստի և արժանի բոլոր մտածող մարդերի ուշադրութեան։ Որովհետև այս տեղ խօսվումէ այնպիսի առարկայի վերայ, որ հաղարաւոր գալոց մարդերի համար ունի կենսական նըշանակութիւն, ուստի դեռ այս յառաջաբանութիւնս չաւարտած, կըներեմ ինձ մի կամ երկու նկատողութիւն անել յատկապէս ընթերցողներիս վերաբերութեամբ։ Շատ անգամ պատահել է, որ ինձ, իբրև հեղինակի, դիմել են այնպիսի հարցուածներով երեխաների խնամատարութեան մասին, որով հաւաստեաւ հաստատվել է, թէ հարցանողները ներգործել են ոչ միայն իմ բացադրած կանոններին համաձայն, այլ միանգամայն նոցա հակառակ։

Այսպիսի դիպուածներում գրեթէ միշտ երևումէ, որ հարցանողները գլխացաւութիւն չեն արած հիմնաւորապէս ծանօթանալու գրքի բովանդակութեան, որն որ համարել էին իրանց ուղղեցոյցը։ բացայայտ երևումէ, որ նոքա երբէք սովորութիւն չեն ունեցած հարկաւոր եղած ժամանակը նայելու այդ գրքի մէջ ծանօթութեան համար։ Մի անգամ կարդալով նոքա արդէն բաւականացել են և սկսել ներգործել իրանց մտքն ու խառն գաղափարների հիման վերայ, կարծելով որ դոքա սոյն գրքի մէջ պարունակուած գաղափարներն են։ Բայց այս գրքի առարկան անփոփումէ

իւր մէջ այնպիսի ծանրակշիռ և բազմատեսակ հանգամանքներ և կանոններ, նաև ընթերցողիս շատերին համար այնպիսի նոր բաներ, որ դոցա լիապէս իւրացուցանելու և պատշաճապէս գործ դնել կարողանալու համար, հարկաւոր է ուշադրութեամբ քանիցս անգամ կարդալ և որքան կարելի է շուտ շուտ դիմել նորան տեղեկութեան համար։ Ահա այսպիսի ուսումնասիրութեամբ միայն բժիշկները ընդունակ են լինում պատասխանելու, թէ այս կամ այն դիպուածում ինչ պիտոյ է անել։ Օաւակի առողջութեան մեծախորհուրդ նշանակութիւնը մեր համար ոչ պակաս շարժառիթ է այդ գիտութիւնը սեպհականելու, քան թէ այն գիտութեան սէրը կամ պարտականութեան զգացողութիւնը, որով ոգևորվումեն բժիշկները։ Ով որ իմ գիրքը կըկարդայ այնպէս, ինչպէս կարդացվումեն վիպասանութիւնքը կամ լրագիրները, սակաւ օգուտ կարող է քաղել դորանից, և ես, թէև շատ ուրախ եմ, որ հաւանել են իմ գրքին և դիտաւորութիւն ունին իմ բացատրած կանոներին համեմատ ներգործել, բայց անտարբեր եմ մնալու դէպի նոցա ճշմարտախոս գովեստները, մինչև որ դոցա հետ կապակից չեն իրական արդիւնքներ, որ պիտոյ է լինին ամենալաւ առհաւատչեան նոցա անկեղծաւորութեանը։ Ես այն պատճառով աւելորդ չհամարեցի անել այս նկատողութիւնը, որ յոյս ունիմ համոզել ընթերցողներիցս շատերին աւելի ուշադրութեամբ կարդալու, ուրեմն և աւելի օգտակար կացուցանելու այս գիրքը։

Ս. ԿՈՄԲ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԱՆԿ։

Երես։

Յառաջաբանութիւն տպագրողի. . . . . ա
» Կոմբինը 1

ԳԼՈՒԽ I. — Որպիսի ազդեցութիւն ունի ծնողաց առողջութիւնը զաւակների առողջութեան վերայ։

Ժառանգական ազդեցութիւնը զաւակների առողջութեան վերայ 1
Որպիսի պայմաններում ծնողաց առողջութիւնը մեծագոյն ազդեցութիւն է ունենում զաւակների առողջութեան վերայ 2
Ժառանգական տրամադրութիւն դէպ ի հիւանդութեան . . 4
Ամուսնութիւնք արիւնակից մօտ ազգականների մէջ . . . 8
Ասակը, երբ հարկաւոր է ամուսնանալ 9
Ծնողաց դրութիւնը 10

ԳԼՈՒԽ II. — Ինչ ազդեցութիւն ունի զաւակի առողջութեան վերայ մօր կենցաղավարութիւնը յղութեան ժամանակ։

Մօր հոգեկան դրութիւնը, առողջութիւնը և վարքը յղութեան ժամանակ 15
Մօր հոգեկան դրութեան ազդեցութիւնը.—ախտերը. . . 17
Անգամանքները, որոնց վերայ գլխաւորապէս հարկաւոր է ուշ դարձնել յղութեան ժամանակ 21
Կերակուրը յղութեան միջոցին 23
Կերակուրը պէտք է պարզ և չափաւոր լինի 28
Մոլի ցանկութիւնք 29
Ագուստը յղութեան միջոցին 30
Մարմնամարզութեան օգուտը յղութեան ժամանակ . . . 32
Լուացման առողջարար ազդեցութիւնը յղի կանանց վերայ . 33

ԳԼՈՒԽ III. — Մեծ մահը երեխաների մէջ յառաջանում է այնպիսի պատճառներից, որոնց առաջը ըստ մեծի մասին կարելի է բռնել; գլխաւորաբար դա յառաջանում է ծնողաց տգիտութիւնից:

Երես:

Մեծ մահ երեխաների մէջ մինչև նոցա հինգ տարեկան լինելը 35
Երեխաների մահի թիւը բժշկապետ Ֆարրի հաշուին համեմատ 37
Երեխաների մահի պատճառները 39
Առողջաբանական հնարների ազդեցութիւնը առողջութեան բարելաւութեան վերայ քաղաքների մէջ 45
Երեխաների մահի սակաւանալը վերջին ժամանակներում. . 46
Երեխաների մահի առաջը բռնելու կարևոր գիտութիւն մեր համար 51

ԳԼՈՒԽ IV. — Երեխաների առողջութիւնը մի պատահական բան չէ, այլ կախում ունի մշտական օրէնքներից:

Երեխաների կազմուածքը 53
Իւանդութիւնը և վաղահաս մահը յառաջանումեն առողջութեան բնական պայմանների խանգարվելուց 54
Վատ առողջութեան պայմանները. 56
Իւանդութեան կրօնական նշանակութիւնը 57
Ֆիզիօլոգիայի գիտութեան կարևորութիւնը 59

ԳԼՈՒԽ V. — Երեխայի դրութիւնը ծննդեան ժամանակ:

Նորածին մանուկի առողջութեան վերայ անմիջապէս ներգործող պատճառները 61
Մանուկը սկսում է շնչել 62
Մանուկի ջղերի զգայականութիւնը 63
Արիւնի շրջանագարձութիւնը և կենդանական ջերմութիւն . 64
Մանկական հասակում կենդանական ջերմութիւնը չէ պատրաստվում բաւականաչափ 65
Մանուկների անկարողութիւնը ցրտի դիմանալու 66
Երեխաների ցրտի ազդեցութիւնից պահպանելու կարևորութիւնը 66
Երեխայի մարսողութեան սկիզբը 67
Երեխայի նախկին կերակուրը կամ սնունդը. . . . . —
Արտաթորման գործարաններ. աղիքներ, երիկամունք, մորթ և թոքեր 68
Մորթի արտաշնչութիւնը և թոքերի արտաթորութիւնը . 69
Ծանրակշիռ նշանակութիւնը կանոնաւոր արտաթորութեան. 70
Գործարանական և կենդանական կամ կենսական գործողութիւնքը մարմնի 71

Երես:

Մարդու առանձնական յատկութիւնքը 73
Կազմուածքի համապատասխանութիւնը արտաքին պայմանների 74

ԳԼՈՒԽ VI. — Նորածին մանուկի խնամելու եղանակը:

Նորածին մանուկին հարկաւոր է փաթաթել կակուղ տաք կտաւեղէնի մէջ 76
Երեխայի առաջին լուացումն . . . . . —
Լուանալու ժամանակ հարկաւոր է զգաստ լինել, որ աչքերը չվնասուին 77
Լուացման ջրի բարեխառնութեան աստիճանը. 77
Լուանալուց յետոյ ինչպէս պէտք է սրբել մանուկին. . . —
Հագուստ 79
Կտաւեղէն հագուստի օգուտը . . . . . —
Չափազանց շատ փաթաթելու և սենեակի մէջ չափազանց ջերմութեան վնասը 80
Մանուկի գիշերազգեստը 81

ԳԼՈՒԽ VII. — Մանուկի կերակուրը:

Խորժակ 83
Կաթի որակութիւնը սկզբում զկնի ծնդեան և նորա ազդեցութիւնը մանուկի վերայ 84
Քանի անգամ հարկաւոր է կերակրել երեխային 86
Պէտք է կերակրել մանուկին որոշ ժամերում . . . . . —
Մանուկին գիշերով կերակրելը 88
Հարկաւոր է ուշ դարձնել մեր կերակրի վերայ մանուկին կերակրելու ժամանակ 89
Մանուկի ամենալաւ ծծմայրը մայրն է 90
Որ կենցաղավարութիւնը մանուկին կերակրելու ժամանակ 90
Ծծով կերակրելու ժամանակ մի ուրիշ երկրորդական կերակուր տալու կարևորութիւնը 95
Առաջին ատամները 96
Մանուկի կերակուրը ծծից կտրելուց մի քանի օր առաջ . 97
Մանուկի ծծից կտրիլը 98
Որպիսի վտանգների է ենթարկվում մանուկը ծծից կտրելու ժամանակ 100
Պիտոյ է զգուշանալ բժշկական հնարներ գործածելուց . . 101

ԳԼՈՒԽ VIII. — Յատկութիւն, մարմնամարզութիւնք և քուն երեխայական հասակում:

Լուղային նիւթի արտաթորութիւնը մորթի մակերևութից . 103
Ամեն օր հարկաւոր է լուանալ և լողացնել երեխային . . 104

Երես։

Ջրի բարեխառնութիւնը պէտք է որոշել ջերմաչափի օգնականութեամբ 106
Երեկոյական ջերմ ջրով վաննայի օգտաւէտութիւնը . . . —
Սառն ջրով վաններները վնասակար են 107
Մարմնամարզութիւնք 108
Մարմնամարզութիւնք բաց օդի մէջ 109
Այդ միջոցին որպիսի զգուշութիւնք կարևոր են . . . . —
Ինչպէս պէտք է բռնել երեխային ձեռքի վերայ 110
Երեխայի հագուստը պէտք է յարմար լինի նորա մարմնամարզութեանց , ... 112
Վնասակար է յորդորել երեխային վաղաժամ մանգալու . —
Երեխայի քունը 114
Աշխատելու է, որ երեխան որոշ ժամերում քնէ 115
Հնահատութեան պատճառները 116

ԳԼՈՒԽ IX. — Ընտրութիւն ծծմայրի և սորա կենցաղավարութիւնը։

Որպիսի յատկութիւնք կպահանջուին ծծմայրից 119
Ինչ պատճառներով մայրը անկարող է լինում ծիծ տալ իւր զաւակին 120
Ծծմայր ընտրելու ժամանակ հարկաւոր է խորհրդակցիլ բժիշկի հետ . . . . . , ... 123
Ծծմոր սովորական պակասութիւնքը. 124

ԳԼՈՒԽ X. — Բրուեստական սնունդ։

Վտանգը և դժուարութիւնքը «ձեռքից» կերակրելու. . . 129
Բրուեստաբար սնուցանելու կերակուրի լաւագոյն տեսակը . 130
Որպիսի ջերմութիւն պէտք է ունենայ երեխայի կերակուրը —
Ինչպէս պէտք է տալ կերակուրը երեխային 131
Հարկաւոր է միշտ թարմ կերակուր տալ երեխային . . . 131
Կերակուրի քանակութիւնը 132
Հարկաւոր բան է, որ երբեմն կերակուրների մէջ փոփոխութիւն կամ զանազանութիւն լինի 133

ԳԼՈՒԽ XI. — Մանկանոց։

Լաւ մանկանոցի պայմանները 136
Տան տեղադրութիւնը 138
Մանկանոցի ընտրողութիւնը 140
Մանկանոցի օդափոխութիւնը . , . , ... 140
Մանկանոցի բարեխառնութիւնը 144

ԳԼՈՒԽ XII. — Խնամատարութիւն երեխային ատամնահանութեան ժամանակը։

Երես.

Փոփոխութիւնք երեխայի կազմուածքի մէջ. 147
Ժամանակաւոր կամ կաթի ատամներ 148
Մշտական ատամներ 149
Ատամնահանութիւնը ունի երկու աստիճան 149
Խնամատարութիւն երեխային ատամնահանութեան ժամանակը 151
Ջերմ վաններ և երեխայի կերակուրը ատամնահանութեան ժամանակ. 152
Հարկաւոր է հեռացնել այն բաները, որ կարող են գրգռել երեխային. 153
Հարկաւոր է դիմել բժիշկի խորհուրդին. 154
Երկրորդ ատամնահանութիւնը 155
Հարկաւոր է ատամները յստակ պահել . . . . . —

ԳԼՈՒԽ XIII. — Խնամատարութիւն երեխային ծծից կտրելուց մինչև երկրորդ տարեկան հասակը։

Երեխային ծծից կտրելու ժամանակը 156
Երեխաների մահը կեանքի առաջին և երկրորդ տարում . . —
Երկրորդ տարում մեռնող երեխաների մահի պատճառը . . 157
Երեխաների հիւանդութիւնքը գլխաւորապէս յառաջանումեն մարսողութեան գործարանների խանգարուելուց . . . 158
Մոլորութիւն երեխաների կերակուրի վերաբերութեամբ . 159
Որպիսի կերակուր պէտք է տալ երեխային . . . . . —
Երեխային պէտք է կերակրել կանոնաւորապէս, որոշ ժամերում 162
Կերակուրի քանակութիւնը . . . , ... —
Կարևոր է փոփոխութիւն կամ զանազանութիւն կերակուրի մէջ 163
Յստակութիւն։ Լուացման ջրի բարեխառնութիւնը . . . 164
Վաններների օգտաւէտութիւնը . . . . . —
Երեխայի հագուստը 165
Մարմնամարզութեանց և մաքուր օդի կարևորութիւնը . . 168
Ռոլորովին պէտք է արգելել երեխային վաղաժամ մանգալ սովորցնելը . . . . . —
Զբօսանքի լաւագոյն ժամանակը օրուայ մէջ . . . . . —
Հարկաւոր է ուշադիր լինել երեխայի հագուստին զբօսանքի ժամանակ 169
Երեխայի քնի վերաբերութեամբ ևս կարգ ու կանոն պէտք է պահել. . . . . —

Երես

Երբ հարկաւոր է թողնել տալ երեխային ցերեկով քնելու սովորութիւնը . . . —
Մեծապէս հարկաւոր է զգուշանալ, որ երեխայք զարթելուց յետոյ անկողնի մէջ չմնան . . . —
Ամեն երեխայ պէտք է ունենայ առանձին անկողին . . . 170
Վնասակար է քնացնել երեխային ձեռքի կամ ծունկի վերայ, շարժելով. . . . —
Հոգատարութիւն հիւանդութեան ժամանակ . . . 171
Մեծամեծ վնասներ անկանոնաւորապէս դեղեր գործածելուց 172
Մայրերին և ծծմայրներին սխալ հասկացողութիւնը հիւանդութեան վերայ . . . 173
Հարկաւոր չէ օտարների խորհուրդներին հաւատ ընծայել և իւր գործողութիւնքը ծածկել բժշկից . . . 174
Բժիշկի հետ հարկաւոր է ճշմարտութեամբ խօսել . . . 175
Հիւանդ երեխային հարկաւոր է խաղաղ ու օդ բանուկ սենեակի մէջ պահել . . . —
Հիւանդ երեխայի կերակուրը . . . 176
Ժամանակին հարկաւոր է դիմել բժշկի օգնութեան . . . 177
Ինչ կանոններ պէտք է պահել, երբ որ բժիշկ կանչելու մարդ են ուղարկում . . . —
Հարկաւոր չէ բժիշկի անունով վախեցնել երեխաներին . . . 178

ԳԼՈՒԽ XIV. — Երեխայի մտաւոր դրութիւնը և կրթութեան կանոնները:

Կրթութիւնը պէտք է աշխատէ զարգացնել մարմնի մէջ առողջ միտք և ոյժ . . . 180
Այն վնասները, որ յառաջ են գալի մտքի զարգացման բնական պայմանները չկատարելուց . . . 181
Երեխայի մտաւոր դրութիւնը . . . —
Արտաքին զգայարանքների կրթութիւնը . . . 182
Կարճատեսութեան (հաւկուրութեան) պատճառները . . . 185
Հոգեկան և մտաւորական կարողութեան կրթութիւնը . . . 186
Մտքի և ուղեղի դրութիւնը երեխայական հասակում . . . —
Մտաբանութեան (ֆրէնօլօգիա) գործադրութիւնը կրթութեան 191
Ամենայն ընդունակութիւն պիտոյ է զարգացնել, ներգործելով նորա վերայ իրան համապատասխան առարկաներով. . . 195
Բարոյական կրթութիւնը պէտք է սկսուի ամենամատաղ հասակից . , . . . 197
Հարկաւոր է իմանալ մտաւոր ընդունակութեանց յատկութիւնը և նոցա գործունէութիւնը գրգռող առարկաները 198

ԳԼՈՒԽ XV. — Բարոյական կրթութիւնը մանկական և տղայական հասակում:

Երես.

Բարոյական կրթութիւնը սկսվումէ ծննդից շատ ժամանակ չ'անցած . . . 202
Երկու մի օրինակ վնասակար ծայրեր. անսահման ազատութիւն տալ երեխային և միանգամայն խափանառիթ լինել նորա ինքնուրոյն գործունէութեան . . . 204
Սովորական մոլորութիւնքը երեխաների բարոյական կրթութեան վերաբերութեամբ . . . 205
Օրինակ ստորակարգ կենդանիներից . . . , . . . 206
Ինքնուրոյն գործունէութեան և անձնաառաջնորդութեան զարգացումն երեխայի մէջ . . . 210

ԳԼՈՒԽ XVI. — Շարունակութիւն. բարոյական կրթութիւն մանկական և տղայական հասակում:

Օրինակները մեծ ազդեցութիւն ունին երեխաների վերայ . 211
Սխալ կարծիք է կիրքերը և բարոյական յատկութիւնքը մտաւոր կրթութեան հետեւանք համարել . . . 212
Մօր ազդեցութիւնը . . . 214
Լաւ մանկական դպրոցների մեծակշիռ նշանակութիւնը . . 216
Դաստիարակները պէտք է հիմնաւորապէս իմաստասիրեն մանկավարժութիւնը . . . 218
Երեխայի կրօնական կրթութիւնը . . . 220
Երեխայի կրթող ազդեցութեան բազմակերպութիւնը. . . 226
Հարկաւոր է վարժել երեխայի բոլոր ընդունակութիւնքը . 227
Պարապմանց բազմակերպութեան ծանրակշիռ նշանակութիւնը 229
Մտաւոր ընդունակութեանց աստիճանաբար զարգացողութիւնը 230
Ջղային համակարգութեան չափազանց գրգռողութիւնից յառաջացած վնասը . . . 232
Վատ կրթուած երեխայք . . . 233
Լաւ կրթութեան հետեւանքները . . . 236

Յաւելուած:

Ա. Արիւնակից ազգականների մէջ եղած ամուսնութիւնքը . 241
Բ. Երեխայական հիւանդութիւնք . . . 244
Գ. Կաթի և այլ ուտելիքների բաղադրութիւնը. . . . 249
Դ. Ատամնահանութիւն . . . 259
Ե. Բժիշկների կարծիքը ժողովրդական ֆիզիօլօգիայի կարեւորութեան և հասարակաց վարժարաններում առողջաբանութեան դասեր կարդալու մասին . . . 261

Յաւելուածք տպագրողք։

Երես.

Ա. Հայ յատուկ արական և իգական անունների ցանկը, Հայոց պատմութիւնից քաղած 263

Բ. Թէ ինչպէս յառաջանումն բոյսերի, կենդանիների և մարդերի մէջ արական կամ իգական սեռերը։ Տիւրի պրոֆէսսորի շարադրութիւնից 266

Գ. Որորոցի (օրօրոցի) երգեր. 271

Դ. Աղիւսակ պարզ տոկոսի, հարիւրին 4%, 5% և 6%, մէկ ֆանէթ դրամագլխից սկսուած մինչև մէկ միլիոն և նոցա շահը մէկ օրից մինչև մէկ տարի։ Աղիւսակին յաւելցրած է համառօտ մեկնութիւն տոկոսի աղիւսակը գործածելու մասին և աղիւսակ գլխաւոր ազգաց դրամների Դաղղիոյ և Կ. Պոլսոյ դրամներուն հետ բաղդատուած (վերջինը առած է Պ. Միքայէլեանցի շարադրած և պ. Էրամի տպած թուաբանութիւնից) (առանձին) Ե. Ե. . . . . I—VI և 1—28

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL010624